# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 38-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման առաջադրանքի նախագծին հավանություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 39-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման առաջադրանքի նախագծին՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 11-ի N 39-Ա որոշման

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ

**1. Համայնքի հիմնական բնութագիրը.**

**Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը 560,39 հա, բնակչության թիվն 845 մարդ,**

բնակչության տարիքային կազմը, *այդ թվում՝*
0-ից մինչև 6 տարեկան երեխաներ՝ 58 մարդ,
7-ից մինչև 17 տարեկան դպրոցահասակներ՝ 102 մարդ,
աշխատունակ հասակի բնակչություն՝ 602 մարդ,
թոշակառուներ՝ 83 մարդ:

**հողային ֆոնդի փաստացի բաշխումը,** ***այդ թվում՝***
բնակավայրի հողեր՝ 214,08 հա
*այդ թվում՝*
բնակելի կառուցապատման՝ 156,68 հա
*այդ թվում՝*
տնամերձ՝ 84,72 հա
այգեգործական (ամառանոցային)՝ 71,86 հա
հասարակական՝ 6,49 հա
խառը կառուցապատման՝ -հա
ընդհանուր օգտագործման՝ 11,87 հա
այլ հողեր՝ 39,04 հա

**գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 275,53 հա,** ***այդ թվում՝***
վարելահող՝ 119,39 հա
բազմ. տնկարկներ՝ -հա
*այդ թվում՝*
պտղատու այգի՝ -հա
խաղողի այգի՝ -հա
խոտհարք՝ -հա
այլ բազմամյա՝ -հա
արոտ՝ 9,95 հա
այլ հողեր՝ 146,19 հա

**արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 43,1 հա, այդ թվում՝**

արդյունաբերության՝ 15,1 հա

գյուղատնտեսական արտադրության՝ 28 հա

պահեստարանների՝ -հա

ընդերքօգտագործման՝ -հա

**էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 10,75հա, *այդ թվում՝***

էներգետիկայի՝ 0,91 հա

կապի՝ -հա

տրանսպորտի՝ 9,77 հա

կոմունալ ենթակառուցվածքների՝ 0,07 հա

**հատուկ պահպանվող տարածքներ՝ 4,06 հա**

բնապահպանական՝

*այդ թվում՝*

արգելոցներ՝ -հա

արգելավայրեր՝ -հա

ազգային պարկեր՝ -հա

առողջարարական՝ -հա

հանգստի՝ -հա

պատմական և մշակութային հողեր՝ 4,06 հա

**ջրային հողեր՝ 12,87 հա**

*այդ թվում՝*

գետեր՝ 6,08 հա

ջրամբարներ՝ - հա

լճեր՝ - հա

ջրանցքներ՝ 6,78 հա

հիդրոտեխ. և ջրտնտ. այլ՝ 0,01 հա

**Պահուստային, հատուկ նշանակության և անտառային հողեր համայնքի հողային հաշվեկշռում չկան:**

Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են 2016 թվականին հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

տարածքներն ըստ սեփականության ձևերի՝

*այդ թվում՝*

***պետական սեփականություն՝ 24,72 հա***

***համայնքային սեփականություն՝ 179,96 հա***

***ֆիզիկական անձանց սեփականություն՝ 339,13 հա***

***իրավաբանական անձանց սեփականություն՝ 16,47 հա***

***օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների և ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ՝ 0,11 հա:***

**Բնակելի ֆոնդը ըստ հարկայնության.**

ցածրահարկ առանձնատներ՝ 510 միավոր 15 հեկտար մակերեսով, երկհարկանի առանձնատներ՝ 150 միավոր 2,5 հեկտար:

**Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը.**

մանկական նախադպրոցական կազմակերպություն՝ մսուր-մանկապարտեզ համայնքը չունի, հանրակրթական դպրոցը կառուցված է 180 աշակերտական տեղով, որտեղ հաճախում են 73 աշակերտ: Մշակույթի տունը գտնվում է համայնքապետարանի շենքում, սակայն չի գործում: Գրադարանը գտնվում է համայնքապետարանի շենքում: Համայնքն առանձին ամբուլատոր շենք չունի, այն գտնվում է համայնքապետարանի շենքում:

**Ինժեներական սարքավորումներ և բարեկարգում.**

ընդհանուր ջրօգտագործում տնտեսական և
խմելու նպատակով՝ 280,1 հազ. խոր/մ/օր
էլեկտրամատակարարում՝ 680 հազ. կվ/ժամ/տարի
համայնքում գազի ծախսը՝ 210 500 խոր/մետր

**2. Ռեսուրսների հիմնական տեսակը, արտադրության գերիշխող ճյուղերը ինժեներատրանսպորտային ապահովվածությունը.**

բանջարաբուծություն, անասնապահություն, ծածկած գրունտի մշակություն, ձկնաբուծություն

*(տվյալների համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերի վերաբերյալ)*

Համայնքի ջրամատակարարումն ապահովվում է «Արզնի-Երևան» և «Արզական-Երևան» ջրատարներից, համայնքը կոյուղացված չէ, ապահովված է էլեկտրամատակարարման ցանցերով:

Ինժեներական համակարգերի առկա իրավիճակի փաստագրման և հեռանկարային զարգացման մասով նախագծային աշխատանքներն իրականացնելիս համագործակցել էներգետիկ ցանցերը տնօրինող, շահագործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի հետ:

*(տվյալների համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ)*

**3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.**

Դաշտավարություն, բանջարաբուծություն, անասնապահություն, ձկնաբուծություն:

Առաջիկա տարիներին առաջնահերթ կարգով անհրաժեշտ է իրականացնել մսուր-մանկապարտեզի, մշակույթի տան, գրադարանի, շենքի կառուցման, առանձին փողոցների գիշերային լուսավորության անցկացման, գազիֆիկացման, խմելու ջրագծերի պլաստմասե խողովակներով փոխարինման, ոռոգման ներքին ցանցի վերանորոգման, համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման, երիտասարդ, աճող ընտանիքներին տնամերձ հողամասերով ապահովում:

*(համայնքի զարգացման ծրագրից քաղվող՝ սոցիալական մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջներ)*

**4. Նախագծման հիմքը.**

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 35-Ն որոշումը:

**5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներ.**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատելու մասին» N 610-Ն, 2007 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի նիստով հաստատված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգերի դրույթները և 2010 թվականի հունվարի 14-ին ընդունված Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 14-ի «Գետամեջ համայնքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» N 9-Ն որոշումը:

*(որոշումների ընդունման ժամկետները, համարը, /կցել պատճենները/)*

**6. Քաղաքաշինական (այդ թվում՝ հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջներ.**

Բնակելի, հասարակական, արտադրական նշանակության կառուցապատման համար տարածքների արդյունավետ օգտագործում, շրջակա միջավայրի, լանդշաֆտների, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների նախատեսում:

Բնակավայրի տարածքային զարգացումը նախատեսել բնակչության համար անվտանգ և բարենպաստ միջավայրի ձևավորման, տրանսպորտի, կապի, ինժեներական, սոցիալական ենթակառուցվածքների կատարելագործման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից (այդ թվում՝ երկրաշարժից) տարածքների պաշտպանության, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների ապահովմամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 138-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների:

Հնարավորինս զերծ մնալ պետության կամ համայնքի կարիքների համար քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող հողամասեր վերցնելու անհրաժեշտություն ենթադրող լուծումներից, իսկ նման առաջարկությունների պարագայում ներկայացնել հիմնավորումներ՝ այլընտրանքային լուծումների կամ դրանց բացակայության վերաբերյալ:

*(պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջներ, նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ դրանց առկայության դեպքում)*

**7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում).**

Պարզեցված գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալները՝ տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզներն ու կադաստրային այլ

տվյալները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից վերջին տարիներին կազմված և ճշտված պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և անհրաժեշտ այլ ելակետային տվյալները ձեռք է բերում նախագծման աշխատանքների Կապալառու կազմակերպությունը: Գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը առկայության դեպքում համայնքին տրամադրում է Հայաստանի Հանրապետության սեյսմիկ պաշտպանության ծառայության կողմից կազմված տարածքի սեյսմիկ շրջանցման քարտեզը:

Ընդերքի հետ առնչվող տեղեկատվությունը հնարավոր է ստանալ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից:

*(նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի գեոդեզիական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներա-երկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվություն, այդ թվում՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից.)*

**8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.**

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի տարածքն առանձնացնելիս հնարավորինս զերծ մնալ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող այլ նպատակային նշանակության հողամասեր ներառող լուծումներից:

Ըստ առանձին գոտիների սահմանել հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակներ, առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման մանրամասն չափորոշիչներ:

*(անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները)*

**9. Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ սահմանված պարզեցված կազմով և այդ որոշմամբ նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող պահանջներով:

**Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում ներառվելու են համայնքի հողերի օգտագործման սխեմայի, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագծի մշակումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408-Ն որոշումներով սահմանված՝ նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող պահանջներով:**

Համայնքի գլխավոր հատակագծի համալիր փորձաքննությունն ապահովել Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքվող պայմանագրով նախատեսվող պարտավորությունների համաձայն:

Մշակված նախագծի փաթեթը հասարակայնության ներկայացուցիչների քննարկմանն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N 660 որոշման պահանջներին համապատասխան:

Սեյսմամիկրոշրջանացման աշխատանքերն իրականացնել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1352-Ն որոշման 2-րդ կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մարտի 4-ի N 196-Ն հրամանով և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2013 թվականի մարտի 13-ի N 69-Ն հրամանով հաստատված «Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարների համատեղ հրամանի պահանջների:

Ինժեներական համակարգերի առկա իրավիճակի փաստագրման և հեռանկարային զարգացման մասով նախագծային աշխատանքներն իրականացնելիս համագործակցել ջրային, էներգետիկ, կապի մալուխների ցանցերը տնօրինող, շահագործող ընկերությունների հետ:

*(ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ /առկայության դեպքում/)*

**10. Սույն առաջադրանքը համաձայնեցվել է** Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1920-Ն որոշմամբ սահմանված պետական և տարածքային կառավարման մարմինների հետ:

Առաջադրանքը կազմեց՝
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Պապոյան

/ստորագրությունը, ստորագրությունը/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 40-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի հատված 6-ի՝

ա. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1050,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

բ. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1050,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

գ. 3110 տողի՝ «ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1050,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

դ. 3100 տողի՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1050,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ե. 3071 տողի՝ «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «400,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

զ. 3071 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «400,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

է. 3071 տողի՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «400,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ը. 3070 տողի՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «400,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

թ. 3000 տողի՝ «Սոցիալական պաշտպանություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «400,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժ. 2824 տողի՝ «-Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «250,0» թիվը փոխարինել «150,0» թվով.

ժա. 2824 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «800,0» թիվը փոխարինել «700,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժբ. 2824 տողի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «800,0» թիվը փոխարինել «700,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժգ. 2820 տողի՝ «Մշակութային ծառայություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «800,0» թիվը փոխարինել «700,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժդ. 2800 տողի՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «800,0» թիվը փոխարինել «700,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժե. 2641 տողի՝ «Էներգետիկ ծառայություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժզ. 2641 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժէ. 2641 տողի՝ «Փողոցների լուսավորում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժը. 2640 տողի՝ «Փողոցների լուսավորում, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժթ. 2600 տողի՝ «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ի. 2511 տողի՝ «-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իա. 2511 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իբ. 2511 տողի՝ «Աղբահանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իգ. 2510 տողի՝ «Աղբահանում, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իդ. 2510 տողի՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «220,0» թիվը փոխարինել «20,0» թվով.

իե. 2491 տողի՝ «Հողի իրացումից մուտքեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «-500,0» թիվը փոխարինել «-30957,0» թվով.

իզ. 2491 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «-500,0» թիվը փոխարինել «-30957,0» թվով.

իէ. 2491 տողի՝ «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «-500,0» թիվը փոխարինել «-30957,0» թվով.

իը. 2490 տողի՝ «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «-500,0» թիվը փոխարինել «-30957,0» թվով.

իթ. 2451 տողի՝ «-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «980,0» թիվը փոխարինել «14437,0» թվով.

լ. 2451 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «980,0» թիվը փոխարինել «14437,0» թվով.

լա. 2451 տողի՝ «Ճանապարհային տրանսպորտ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «980,0» թիվը փոխարինել «14437,0» թվով.

լբ. 2451 տողի՝ «Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «480,0» թիվը փոխարինել «-16520,0» թվով.

լգ. 2161 տողի՝ «-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «0,0» թիվը փոխարինել «8000,0» թվով.

լդ. 2161 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» 6-րդ սյունակում «7,0» թիվը փոխարինել «8007,0» թվով և 8-րդ սյունակում «0,0» թիվը փոխարինել «8000,0» թվով.

լե. 2161 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» 6-րդ սյունակում «7,0» թիվը փոխարինել «8007,0» թվով և 8-րդ սյունակում «0,0» թիվը փոխարինել «8000,0» թվով.

լզ. 2160 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝» 6-րդ սյունակում «7,0» թիվը փոխարինել «8007,0» թվով և 8-րդ սյունակում «0,0» թիվը փոխարինել «8000,0» թվով.

լէ. 2111 տողի՝ «-Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 8-րդ սյունակներում «750,0» թիվը փոխարինել «9000,0» թվով.

լը. 2111 տողի՝ «-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «100,0» թվով.

լթ. 2111 տողի՝ «-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «20,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

խ. 2111 տողի՝ «-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «15453,0» թիվը փոխարինել «17273,0» թվով.

խա. 2111 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «19775,7» թիվը փոխարինել «30475,7» թվով, 7-րդ սյունակում «18349,0» թիվը փոխարինել «20049,0» թվով և 8-րդ սյունակում «1426,7» թիվը փոխարինել «10426,7» թվով.

խբ. 2111 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «19775,7» թիվը փոխարինել «30475,7» թվով, 7-րդ սյունակում «18349,0» թիվը փոխարինել «20049,0» թվով և 8-րդ սյունակում «1426,7» թիվը փոխարինել «10426,7» թվով.

խգ. 2110 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «19775,7» թիվը

փոխարինել «30475,7» թվով, 7-րդ սյունակում «18349,0» թիվը փոխարինել «20049,0» թվով և 8-րդ սյունակում «1426,7» թիվը փոխարինել «10426,7» թվով.

խդ. 2100 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «20055,7» թիվը փոխարինել «38755,7» թվով, 7-րդ սյունակում «18629,0» թիվը փոխարինել «20329,0» թվով և 8-րդ սյունակում «1426,7» թիվը փոխարինել «18426,7» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**